«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
«Սյունիք ՖԱ» ՍՊԸ
Էլեկտրոնային փոստի հասցե՝ syunikfc@gmail.com

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18.09.2025թ.

Զեկուցող (անդամ)	Դավիթ Բակլաչյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան
	Նազելի Արսենյան

Վարույթ՝ 18A-015

Խախտում՝

1. «Սյունիք-08» թիմի ֆուտբոլիստ Հայկ Աբրահամյանի (44865) կողմից մրցակցի հասցեին հայհոյանք հնչեցնելը (Հավելված 1 Զ, 17-րդ կետ)
2. «Սյունիք-08» թիմի կողմից չհայտավորված մարզիչ Գուրգեն Բարսեղյանի մասնակցությունը խաղին (Հավելված 1 Ե, 37-րդ կետ)
3. Մարզիչ Գուրգեն Բարսեղյանի (12440) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը (Հավելված 1 Ե, 27-րդ կետ)

Առաջնություն՝ ՀՀ ֆուտբոլի 2025-2026թթ. մինչև 18 տ. Պատանեկան առաջնություն

Խաղ՝ «Սյունիք-08» - «Վան-08», 13.09.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Սյունիք-08» թիմի ֆուտբոլիստ Հայկ Աբրահամյանի (44865) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 13-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում), «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:
2. «Սյունիք-08» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով: «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի՝ 30,000 ՀՀ դրամի չափով:

3. «Սյունիք ՖԱ» ՍՊԸ մարզիչ Գուրգեն Բարսեղյանին (12440) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 13-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Հիմք ընդունելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2025թ. խմբագրություն) 20-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նիստի նախագահող՝

Դավիթ Բակլաչյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: